ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-36/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի 13.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը և բողոքն առանց քննության թողնելու մասին 26.04.2016թ. դիմումը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 13.04.2016թ. ներկայացված բողոքով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար «Առողջապահության ապահովագրություն» փաթեթի ձեռքբերման նպատակով 07.04.2016թ. հայտարարվել է «ԵՔ-ԲԸՀԾՁԲ-16/3» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու համար

06.04.2016թ. www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներբեռնել է հայտն՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերով: 07.04.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության 1.2 ենթակետի համաձայն՝ Ընկերության հայտը armeps համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի: Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2016թ. նիստի՝ Ընկերության հայտը armeps համակարգի կողմից հետագա գնահատման համար անընդունելի համարելու մասին որոշումն անհիմն է ու անօրինական, որով խախտվել է Ընկերության՝ Ընթացակարգին մասնակցելու իրավունքը, ուստի որոշումը ենթակա է դադարեցման, հետևյալ պատճառաբանությամբ.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ 1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, 3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի չպատճառաբանված, անհիմն որոշմամբ, որով Ընկերության կողմից ներկայացված առաջարկը դիտարկվել է հետագա գնահատման համար անընդունելի և քննության առարկա չի դարձվել, Ընկերությունը փաստացի զրկվել է Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից: «Գնումների մասին» ՀՀօրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ Եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ 1) պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը, 2) գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը, 3) հրավերը և դրանում կատարված փոփոխությունները, 4) գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները, 5) հայտեր

ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները, 6) հայտերով ներկայացված գները, 7) հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները, **8) հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը,** 9) պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը, 10) գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը, 11) գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները, 12) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Ընկերությունը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ ենթակետի համաձայն՝ պետք է հիմնավորեր Ընկերության հայտի մերժումը: Այնինչ, սույն պարագայում, գնահատող հանձնաժողովն առանց որևէ պատճառաբանության և հիմնավորման, Ընկերության կողմից ներկայացված հայտը համարել է հետագա գնահատման համար անընդունելի: Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովն առանց որևէ պատճառաբանության, դրսևորել է կամայական մոտեցում՝ Ընկերության հայտը փաստացի քննության առարկա չդարձնելով՝ Ընկերությանը զրկելով Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 3-րդ ենթակետերը, 6-րդ հոդվածի 1-ին կետը, օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետը, օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետը, 49-րդ հոդվածի 1-ին կետը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշման 44-րդ կետի 4-րդ ենթակետը, Կարգի 45-րդ, 46-րդ հոդվածները՝ Ընկերությունը 13.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ ստացված բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել ԵՔ-ԲԸՀԾՁԲ-16/3 ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2016թ. նիստի՝ Ընկերության առաջարկը հետագա գնահատման համար անընդունելի համարելու մասին որոշումը (արձանագրություն N 2):
2. Կիրառել ժամանակավոր միջոցներ և արգելել ԵՔ-ԲԸՀԾՁԲ-16/3 ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հետագա որոշումների, մասնավորապես՝ պայմանագիր կնքելու մասին որոշման կայացումն ու պայմանագրի կնքումը:

22.04.2016թ. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն՝ ի լրումն 13.04.2016թ. բողոքի, դիմել է գնումների բողոքարկման խորհրդին, որի համաձայն՝ Ընկերությունը խնդրում է նաև դադարեցնել վերոհիշյալ Ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Գնումների բողոքրկման խորհրդին ներկայացված 26.04.2016թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է առանց քննության թողնել 13.04.2016թ. ներկայացված բողոքը:

2. <u>ԳԲԽ-36/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, հիմք ընդունելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի 26.04.2016թ. դիմումը, առաջարկում է Երևանի քաղաքապետարանի կողմից «Առողջապահության ապահովագրություն» փաթեթի ձեռքբերման նպատակով 07.04.2016թ. հայտարարված «ԵՔ-ԲԸՀԾՁԲ-16/3» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2016թ. որոշումը և Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշումը դադարեցնելու մասին «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 13.04.2016թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-36/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Տ. Գևորգյան